

ԳԼՈՒԽ ԺԳ ՎՐԷ՛Ժ

Ձմեռը հասաւ եւ ձիւնն ու սառը պատեցին Յայաստան. Բուդայի կոտորածը դադարեցաւ, միայն թէ իւր անուան սոսկումն ամէն սրտի կը տիրէր, եւ ինք ցրուած ժամանակ իւր արիւնսախանձ զօրավարքը, խստութեամբ պատուիրել էր ամէնուն, որ գարնան սկիզբը անգանդաղ պելզք էին հասնիլ Դուին: Սոցայ մէջ էին մեզ ծանօթ երեք մատնիչ հայ նախ արարք, որ խլաթ քաղքեն մէկ-երկու օրուան ճամփայ յուղարկաւոր երթալէն վերջ՝ հրաժարական ողջոյնը տուին բարբարոս իշխանին եւ բաժնուեցան դառնալու իրենց տուները:

Մուշեղ Վահեւունի երբ իւր երկու մատնութեան ընկերները՝ երկու Վահրամք բաժնուեցան իրմէ, գնաց բնակելու Նազուկ լճին վրայ իւր Յերեթի ամրոցը, ուր հանգիստ նստած կը սպասէր գարնան մեծամեծ վարձքերու Բուդայէ, որ խոստացեր էր գրել Ամիրապետին Նոցայ ամենամեծ ծառայութիւնքը եւ արժանաւոր փոխարէնը: Նազուկ փոքրիկ եւ գեղեցիկ լիճը զարդն էր Կորի գաւառին, եւ ձմեռ ժամանակ ամբողջ սառելով գեղեցիկ հայլի մը կը կազմէր, բայց լճին շրջակայ բազմամարդ գեղերը մեծաւ մասամբ անապատացեալ էին, եւ Մուշեղ չորս կողմ լուր կը դրկէր, որ բնակիչք չի վախեն դառնան իրենց բնակարանները, ապահովութիւն եւ պաշտպանութիւն իրենց խոստանալով: Իսկ գիւղացիք, որ արդէն իւր անիրաւութիւնն երէն ձանձրացեր էին, շատ դժուարութեամբ եւ ակամայ կը դառնային իրենց բնակարանները, եւ մեծ մասը գիւղերուն անապատ մնացել էր:

Ձմեռուան մէջ Տարօնս կողմէն երիտասարդ խումբեր կ'ուզային իրենց պաշարներով, այդ լքեալ գիւղերուն մէջ բնակութիւն կը հաստատէին, Նոյնպէս տարոնեցիք ոմանք հինգ-վեց հոգի Կորայ վանքը եկած հիւրընկալութիւն խնդրելով ուխտաւորաց սենեակները կը բնակէին, եւ վանահայրը թեպէտ սկիզբները հիւրընկալութեան երկայնաթենն ձանձրացած՝ կուզէր զիրենք ճամփայ դնել, բայց Նոցայ գլխաւորին համեստ եւ առաքինի վարմունքը, իւր